4/13

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«12» 04 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 045-24

Ձեռնարկողը՝ ***«ԲԱՐԻ ՄԱՄԱ» բարեգործական ՀԿ***
Ք. Երևան, Գ Նժդեհ 46

Գործունեությունը՝ ***Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրում հանգստյան գոտու, ճամբարի, ճաշարանի, տաղավարի, խաղահրապարակի և պահեստի կառուցման նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 045-24

«12» 04 **2024թ.**

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրում հանգստյան գոտու, ճամբարի, ճաշարանի, տաղավարի, խաղահրապարակի և պահեստի կառուցման նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» բարեգործական ՀԿ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, Շողակաթ բնակավայր,15-րդ փողոց, 1/3 հասցե

Ներածական մաս. «ԲԱՐԻ ՄԱՄԱ» բարեգործական հասարակական կազմակերպությունը նախատեսում է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի 15-րդ փողոց 1/3 հասցեում կառուցել հանգստյան գոտի, ճամբար, ճաշարան, տաղավար, խաղահրապարակ, պահեստ՝ համապատասխան ենթակառուցվածքներով և պայմաններով՝ երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու նպատակով:

Նախնական գնահատման հայտի կազմման համար հիմք են հանդիսացել՝ նախատեսվող գործունեության անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ №02032020-05-0046, /ծածկագիրը՝ 05-074-1086-0122/, Ճամբարակի համայնքապետարանի կողմից 17.04.2023թ. տրված №13-Ճ նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ հողամասի կառուցապատման իրավունք:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի 15-րդ փողոց 1/3 հասցեում: Համաձայն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից տրված գրության՝ կառուցապատումը կատարվելու է Արտանիշի մ/ճ Դրախտիկ տեղամասի 8-րդ քառակուսու 2-րդ անտառամասի ռեկրացիոն գոտում, Սևանա լճի ափամերձ հատվածում՝ հանգստի համար նախատեսված գոտում: Տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1905.0 մ բարձրության վրա: Տարածքի ճարտարապետական լուծումները՝ դիրքը և վայրը, հնարավորություն կտեղծեն երեխաների հանգիստը կազմակերպել Սևանա լճի ափին: Տարածքի ռելիեֆը հիմնականում

հարթ է, ունի մասնակի թեքություն, իսկ հողային տեսքը ավազային է և բացակայում է խոտածածկը: Կից գտնվում են միջպետական ճանապարհը և հանգստյան գոտիներ:
Ըստ նախագծային լուծումների կառուցապատման ցուցանիշներն են.

1. Հողամասի մակերես– 10000 մ²
2. Շինությունների ընդհանուր կառուցապատման մակերես - 551.02 մ²
4. Կանաչապատման մակերես - 7504.98 մ²
5. Ավազապատ խաղահրապարակ – 64 մ²
6. Սալիկապատ անցուղիների մակերես – 80 մ²
7. Լողափ - 1800 մ²

Համաձայն Ճամբարակի համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ տարածքի կառուցապատումը կատարվելու է 1905.0 մ նիշից բարձր հատվածում: Մասնաշենքերի տեղադրման ժամանակ հողային աշխատանքներ չեն կատարվելու, քանի որ հիմնական շինություններ չեն նախատեսվում: Շինությունները սյուներով (երկաթյա ցից) խրվելու են հողային գրունտի մեջ: Հողային աշխատանքները կատարվելու են միայն մաքրման կայանի տեղադրման և ջրահեռացման ստորգետնյա խողովակների անցկացման ժամանակ, որը ենթադրում է 265 մ երկարությամբ կոյուղագծի կառուցում՝ ճամբարից, ճաշարանից դեպի մաքրման կայան, որի արդյունքում կկատարվի մոտ 46,375 մ³ ծավալի հողային աշխատանք: Հանվող հողային զանգվածը ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի հարթեցման և հետլիցքի նպատակով: Տարածքի հողաշերտը կազմված է՝ վերին շերտը խճից, խճավազից, մանրաբեկորներից: Հողային զանգվածն ամբողջությամբ կուտակվելու է տարածքում՝ հատուկ առանձնացված տարածքում և ամբողջությամբ օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար: Բոլոր շինությունները կառուցվելու են մետաղական կոնստրուկցիաներով, ջերմամեկուսիչ շերտով ծածկված պրոֆիլավոր գունավոր թիթեղով: Շինություններում տեղադրվելու են նաև լուսավորության, օդափոխության, հրդեհաշիջման համակարգեր: Օդափոխությունը կազմակերպվելու է սանհանգույցներում, խոհանոցում և ճաշարանում: Արտաքին լուսավորությունը կազմակերպվելու է մետաղական հենասյուներով՝ էլեկտրամատակարարմամբ: Շենքերի տաք ջրի մատակարարումը նախատեսվում է ջեռուցման անհատական կաթսաներից՝ էլեկտրասարքերի օգնությամբ: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պոլիպրոպելինային խողովակներով: Շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ միանալով «Շորժա» ՔԵԿ-ից սնվող «Ծիծեռնակ» 10կվ ՕԳ-ի մոտակա հենասյունից՝ ճյուղավորումով: Նախատեսվում է տեղադրել 10 ԿՎԱ հզորության 10/0,22 կՎ տրանսֆորմատորային ենթակայան՝ համաձայն նախագծի: Տրանսֆորմատորային ենթակայանի տարածքը ցանկապատվելու է, տեղադրվելու են լարման, վտանգավորության մասին նախազգուշացնող ցուցանակներ:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 90*90 մմ չափերի 1 բիոզուգարանից: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով: Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող

մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջոցով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Անիվների լվացումից կուտակված հոսքաջրերը 150 մ երկարությամբ պլաստմասե խողովակներով ինքնահոս հեռացվելու են դեպի բիոզուգարան:

Շահագործման փուլում հողային և ջրային ռեսուրսների մեջ կեղտաջրերի ներթափանցումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան՝ Եվրոլոս-60 տիպի: Մաքրման կայանը լինելու է 1 բլոկային համակարգով, ընդհանուր 2090 կգ քաշով, 7 մ երկարությամբ, 1,9 մ լայնությամբ և 2,4 մ բարձրությամբ՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է օրական 12,0 մ³ ծավալով կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%: Օդափոխման բաքում առաջանում է ակտիվացված տիղմ, որը ժամանակ առ ժամանակ հեռացվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Մաքրման կայանից մաքրված ջրերը ջրահեռացման բակային ներքին ինքնահոս ցանցով հեռացվելու և օգտագործվելու են տարածքի կանաչապատ հատվածների ոռոգման նպատակով: Շենքերի տանիքներից անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը նույնպես հեռացվելու են դեպի կանաչ տարածքներ: Ընկերությունը կարող է տեղադրել նաև կեղտաջրերի նույնատիպ մաքրման աստիճան ապահովող այլ տեսակի մաքրման կայան: Մաքրման կայանը տեղադրվելու է 1905.0 մ բացարձակ նիշից բարձր:

Շահագործման փուլում խմելու և կոմունալ-կենցաղային ջրի մատակարարումը կատարվելու է ևս պայմանագրային հիմունքներով: Նախատեսվող գործունեությունը կրելու է ժամանակավոր բնույթ և աշխատելու է շուրջ 4 ամիս: Կումունալ-կենցաղային նպատակով օգտագործվելու է տարածքում գոյություն ունեցող 6մ³ ծավալով ջրի մետաղական բաքը, ինչպես արդեն նշվեց, բաքը լցվելու է ջրամատակարար կազմակերպության կողմից, պայմանագրային հիմունքով: Ջրի բաքը հետագայում կարող է ծառայել որպես պաշարապահ ծավալ: Կախված շինության տիպից և կարիքից (բացի օժանդակ տարածքներից) տեղադրվելու են ջրի բաքեր՝ 0,5-2,0մ³ ծավալով, որոնք տաքացվելու են էլեկտրական տաքացուցիչներով: Խմելու ջուրը մատակարարվելու է պատրաստի վիճակում՝ սննդային տարաներով՝ 11-19լ տարողությամբ, գնման միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում կտեղադրվեն դիսպենսերային սարքեր ևս:

Նախատեսվում է 1092 մ ² մակերեսով կանաչապատում տեղանքին բնորոշ բուսատեսակներով: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն կանաչապատման նախագծի՝«Սևան» ԱՊ-ի հետ համաձայնեցված: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման միջոցով՝ ինչպես նաև ծաղկանոց՝ 170 մ²: Իրականացվելու է կանաչ զանգվածի ոռոգում՝ կաթիլային եղանակով բուսականության աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով: Նորատունկ բուսականության, ծառերի չկպչելու դեպքում նախատեսվում է նոր ծառատեսակներով փոխարինում:

Նախատեսվող գործունեության տարածքում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները և կենդանիների բնադրավայրերը բացակայում են: Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է .

- գոյություն ունեցող ծառերի պահպանում,

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- բազմամյա տնկիների աճեցման, բույսերի նոր տեսակների ներմուծման և կլիմայավարժեցման, վնասատուների դեմ պայքարի ու հողերի պարարտացման նպատակով՝ բույսերի պաշտպանության քիմիական միջոցների և պարարտանյութերի օգտագործման բացառում,

-գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցվելու են շինարարական աշխատանքները և տեղեկացնելու են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին,

-գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,

բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխել և վերատնկել առանձնացված հատուկ պահպանման գոտում՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ -ի համաձայնությամբ,

-շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

-հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

Գործունեության ենթակա տարածքը անտառապատ է՝ ՏՐԽ C3 անտառային տիպով: Հիմնականում գերակշռում են ասեղանատերևավոր տեսակները՝ սոճին սովորական և սոճենի Ղրիմյանը՝ ընդհանուր 500 հատ քանակով՝ որոնք գործունեության իրականացման ընթացքում պահպանվելու են, չեն հատվելու: Ծառերը միջին տարիքի են՝ 23-40 տ, բարձրությունը՝ 6-17մ, 0,4 լրիվության ցուցանիշով, ոչ հավասարաչափ, պատկանում են 3-րդ բոնիտային դասին: տարածքում առկա են նաև մեկ տասնյակ դեղին ակացիայի թփեր՝ 1-3մ բարձրությամբ:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Այդ նպատակով նախատեսվում է.

-կատարվելու են Սևանա լճի ջրի և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրություններ,

-խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,

-շինանյութերի գնում՝ արտոնագրված մատակարարներից, բացառելով ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսաձին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը,

-տարածքը կառուցապատվելու է ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան,
-ապահովելու են հակահրդեհային միջոցառումները,
-թափոնների տեղափոխումը կազմակերպվելու է համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- շինտեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում,
-շինարարական տեխնիկայի և տրանսպորտայինն միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
-շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում:
Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսվել են ծախսեր, որոնք խոշորացված գնահատվել են տարեկան մոտ 1,500,0 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ճամբարակի և Շողակաթի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Իսկ Սևանա լճի վրա բոլոր տեսակի բացասական ազդեցությունները կբացառվեն, թե շինարարության, թե շահագործման փուլում:

Փորձաքննական պահանջներ

-Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:

-Շինարարական աշխատանքների ընթացքում բացառել հնարավոր շինաղբի կուտակումները «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում:
-Գործունեության իրականացման ընթացքում հնարավորինս չխաթարել տարածքի էկոհամակարգը, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը, լճափի մաքրման աշխատանքները համաձայնեցնել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ:
-Գործունեության իրականացման ընթացքում առաջնորդվել «Սևանա լճի մասին» օրենքի 10-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի N57 որոշման պահանջներով՝ բացառել Սևանա լճի աղտոտումը, վտանգավոր նյութերի, կեղտաջրերի ներթափանցումը, ջրային ռեսուրսի որակական հատկությունների փոփոխումը:
-Ապահովել հայտով նախատեսված Եվրոլոս-60 տիպի մաքրման կայանի կամ այլ համարժեք չափանիշներով մաքրման կայանի տեղադրումը:
-Գործունեության և հարակից տարածքներում ապահովել հայտում ամրագրված կենսաբազմազանության մոնիթորինգը, իսկ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:
-Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
-Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը՝ համաձայնեցված «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԲԱՐԻ ՄԱՄԱ» բարեգործական ՀԿ-ի կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրում ճամբարի, ճաշարանի, դասարանի, տաղավարի, խաղահրապարակի և պահեստի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աննա Սարգսյան